ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՐ Ի ՍՓՅՈՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Արտասահմանի հայ կյանքը բավում տարիներե ի վեր ալեկոծված է վատառողջ հակամարտություններով և գոյության իմաստե զուրկ որոշ հարցերով, որոնք երբեմն կհանգին թշնամական արարքներու և նույնիսկ եղբայրասպանության:

Եվ ահա, մինչ Ս. Զատկի օրերուն, Մենք, Փրկչի Իշման Ս. Սեղանի առաջ կաղոթեինք վասն խաղաղության և միասնության մեր Եկեղեցիին ու մեր ազգին, չարաղետ նոր դեպք մը եկավ ցնցելու Մեր խիղճը, համայն հայության խիղճը:

Դամասկոսի հոգևոր առաջնորդ գերաշնորհ Շավարշ եպիսկոպոս մահափորձի ենթարկվեցավ հայ մարդոց ձեռքով, որ ծանրորեն վիրավորված, այս պահուս կմաքառի մահվան դեմ:

Ինչպե՞ս է որ հնարավոր կդառնան նման արարքներ և ո՞ւր կուզեն հասցնել ոմանք հայ Սփյուռքը այս ընթացքով: Ո՞ւր է հայության սիրտը, ո՞ւր է հայկական արժանապատվության զգացումը, ո՞ւր է հարգանքը դեպի Ս. Եկեղեցին և անոր բարձրաստիճան սպասավորները:

Մենք դառնորեն կողբանք ու կդատապարտենք սույն անպատվաբեր արարքը, որ սև մուր կքսե հայ ժողովուրդի պայծառ ճակատին: Բավական է այլևս: Խնայեցե՛ք հայ ժողովուրդին, խնայեցե՛ք Հայ Եկեղեցիին:

Մենք, խորապես վշտահար, Ս. Էջմիածնեն կոչ կուղղենք Սփյուռքի Մեր բոլոր զավակներուն անխտիր, բոլոր անոնց, որ հայու անունը կկրեն, բոլոր մեր նվիրապետական Աթոռներուն, թեմերուն և եկեղեցական համայնքներուն, բոլոր հայ կազմակերպություններուն ու հայ մամուլին, որպեսզի իրենց խղճի արդար ձայնը լսելի դարձնեն ու հայ կյանքեն ներս այլևս վերջնապես արմատախիլ ըլլան նման բարբարոս կիրքեր, որոնք բնավ երբեք արտահայտությունները չեն հայ ժողովուրդի հոգիին:

Արդեն իսկ խռովահույզ այս աշխարհիս վրա, հյուրընկալ ժողովուրդներու ծոցին մեջ, հայ ազգի զավակները պարտին ապրիլ իբրև օրինապահ, խաղաղասեր քաղաքացիներ, համախմբված իրենց կրոնական ու մշակութային հաստատություններու շուրջ՝ առանց աղմուկի,

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

առանց անկարգություններու, առանց իրենց վրա հրավիրելու ասպնջական երկիրներու դժգոհությունը:

Անցյալ բավում ողբերգություններեն ու փոդ-ձանքներեն հետո, սպասելի է, որ արտասահմանի Մեր ժողովուրդը դառնա ավելի շրջահայաց, ավելի հեռատես, ավելի հավասարակշռված իր ապրումներուն և իր գործունեության մեջ, և թույլ չտա, որ իր ծոցին մեջ կատարվին կուսակցական պայքարի աղետաբեր ծայրահեղ արտահայտություններ:

Խաղաղություն, սեր և միություն ազգիս հայոց, ահա Մեր աղոթքը, ահա Մեր պատգամը: Փրկարար ու շինարար պատգամ՝ որ հին դարերեն մեզի կուգա որպես գերագույն իմաստություն, և որ մեր օրերուն կդառնա առավել այժմեական ու հրամայական, հեռավոր ափերու վրա ցիրուցան ապրող Մեր պանդուխտ վավակներուն համար:

Այս չէ՞ արդյոք նաև պատգամը մեր բյուրավոր նահատակներուն, որոնք մանավանդ այս ապրիլյան օրերուն իրենց անհայտ գերեզմաններեն կաղոթեն վերածնած հայ ժողովուրդի վավակներուն միասնության ու խաղաղ, համերաշխ կյանքին համար, ի խնդիր մեր Եկեղեցվո ու ազգի գերագույն շահերուն:

Հավատացե՛ք, հարազատներ Մեր, **«Եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ բնակէ և սէր նորա ի մեզ կատարեալ է»** (Ա Յովհ. Դ 12):

Ավելի լույս, ավելի սեր և ավելի խաղաղություն հայոց հոգիներուն, հայոց սրտերուն: Եվ բոլորին, բոլորին անխտիր օրհնություն աստվածային՝ ամենայն հայոց Մայր Աթոռ հավերժական Ս. Էջմիածնեն: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

25 ապրիլ 1963
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ